

Բ Ե Ջ Մ Ե Վ Է Գ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԱԵՑ

Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ Գ.

1845

ՄԱՅԻՍԻ 1.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լսողերուն առերևոյն դերքը :

ԼՍՏԱԵՐՈՒՆ առերևոյթ գիրքը և երկրիս վրայի առարկաներուն կրկին երևնալը մէյմէկ օգերևոյթներ են՝ որոնց վրայ մարդս միշտ զարմանքով նայած, և հետաքրքրութեամբ ա. նոնց պատճառը փնտրուած է. արժան է որ մենք ալ հոս անոնց վրայ քիչ մը տեղեկութիւն տանք :

Լսողերուն առերևոյթ գիրքը առաջ կուգայ լուսոյ շառաւիղաց բեկբեկմունքէն. իսկ առարկաներուն կրկին երևնալը՝ ջերմութենէն ու լուսէն :

Լուսոյ շառաւիղները մթնոլորտին այլեայլ կարգերէն անցնելու ատեն (որուն խտութիւնը երկրիս մօտ քանի երթայ կ'աւելնայ) կը բեկանին. բայց երբոր ան շառաւիղները երկնքէն ուղղահայեաց գիրքով իջնան, ան ատեն առանց բեկանելու ուղիղ գծով կ'անցնին մթնոլորտին մէջէն. անոր համար աստղերը զէնիթը՝ այսինքն մեր գլխուն վրայ շիտակ հասնելուն պէս, իրենց բուն տեղը կը տեսնենք զիրենք. բայց զէնիթէն դուրս եղած ատեննին՝ այնպէս կ'երևան՝ իբր թէ իրենց տեղէն և զէնի-

թէն դուրս ըլլային, միշտ իրական տեղէն բարձր. և ահա աս է առերևոյթ գիրքը : Լնոր համար առտուն քանի որ արեւը հորիզոնէն վար է, ըստ ինքեան մենք զինքը պիտի չկարենայինք տեսնել. բայց որովհետեւ իր շառաւիղները օդուն մէջէն անցնելու ատեն կը բեկանին ըսինք, անոր համար կը սկսինք մենք զինքը տեսնել, թէպէտ և ինքը դեռ հորիզոնէն վար ըլլայ : Եւյն կերպով ալ իրիկուան թէպէտ և արեւը հորիզոնէն վար իջած ըլլայ, մենք դեռ շարունակ զինքը կը տեսնենք : Լս կերպով առաւօտեան արշալոյսը ու երեկոյեան վերջալոյսը հորիզոնէն վար ալ ըլլան նէ՝ կը տեսնենք : Եւ մանապէս աստղերը, նաւերը և կամուրիշ առարկաները դեռ հորիզոնէն վար եղած ատեննին՝ մենք աս կերպով կրնանք զիրենք տեսնել :

Կրկնելոյն :

Կրկնելոյն ԵՒ ՈՅԹ՝ կ'ըսուի ան երևոյթը, որով հեռուի առարկաները եր-

Իտ. Fata morgana. Գ. Մ. Mirage.